ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԷՏԱՊԸ

Հ. Ա. ԴԵՎՈՐԳՅԱՆ

Փիլիսոփայության ավելի քան երկուս ու կես հազարամյա պատմությունը պսակող մարքսիստական փիլիսոփայությունը իր ուսմունքը խարսխում է պրակտիկայի ամուր պատվանդանի վրա։ Այդ փիլիսոփայության համար դա սոսկ տեսական սկզբունք չէ. հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքի պահանջմունքներն էին, որ կյանքի կոչեցին մարքսիստական ուսմունքը, գիտության զարգացման մակարդակն ու պահանջներն էին, որ արտացոլվեցին և փիլիսոփայական ընդհանրացում ստան այդ ուսմունքի մեջ։ Այդ նույն հիմքն էր, որ պայմանավորեց նրա հետագա զարգացումը, լայն տարածումն ու անօրինակ հաղթարշավը, նրա դրույթների նյութական մարմնավորումը հասարակական կյանքում և գիտության նվաճումների մեջ։ Ուստի և այն նորը, որով նշանավորվեց մարքսիստական փիլիսոփայության զարգացման լենինյան էտապը, իսոր արմատներ ունի իր ժամանակի հասարակական կյանքում՝ պրոլետարիատի դասակարգային ռևոլյուցիոն պայքարի մեջ և այն խնդիրների մեջ, որոնք մեր դարում գիտության ապրած իսկական հեղափոխության արդյունքը եղան։

Այս տեսակետից հետաքրքրական է պարզել, թե փիլիսոփայության բնագավառում Վ. Ի. Լենինը ինչո՞ւ էր այնքան մեծ ուշադրություն նվիրում իմացաբանությանը, ինչո՞վ և ինչպե՞ս էին իմացաբանական վերացական խնդիրներն առնչվում դասակարգային գոռ մարտերի հետ։

Իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիաների դարաշրջանում պրոլետարիատի գաղափարախոսության դեմ բուրժուազիայի ծավալուն հարձակման դրսևորումներից մեկը եղավ ռևիզիոնիզմը, որը հանդես եկավ մարքսիզմը նոր ժամանակաշրջանի խնդիրներին համապատասխան նորոգելու պահանջով, բայց նրա էությունը հետևյալն էր. «Մարքսիզմի ավելի ու ավելի նուրբ կեղծում, հակամատերիալիստական ուսմունքների ավելի ու ավելի նուրբ խարդախումներ մարքսիզմի քողի տակ,— ահա թե ինչով է բնութագրվում արդի ռևիզիոնիզմը և՛ քաղաքատնտեսության մեջ, և՛ տակտիկայի հարցերում, և՛ առհասարակ փիլիսոփայության մեջ, ինչպես գնոսեոլոգիայի, այնպես էլ սոցիոլոգիայի մեջ»[1]։ *Հատկապես մատերիալիզմի դեմ էր լարն արշավ ծավալել ոչ միայն ռևիզիոնիզմը, այլև նրան սնող բուրժուական ամբողջ գաղափարախոսությունը։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինի նշած բոլոր բնագավառներում մարք-*

---

[1] Վ. Ի. Լենին. *Երկեր, հ. 14, էջ 443 (ընդգծումը մերն է.—Հ. Դ.)։*

սիստական ուսմունքի պաշտպանությունը, հաստատումն ու զարգացումը պահանջում էին հիմնավորել մատերիալիզմը՝ որպես միակ ճշմարիտ փիլիսոփայություն։

Բայց փիլիսոփայության մեջ բուրժուական գաղափարախոսության հակամատերիալիստական արշավը նրա կողմից հարցի ազատ ու կամայական ընտրությունը չէր։ Դա նրա յուրովի արձագանքն էր գիտության առջև ծառացած նոր խնդիրներին։ Ինքը բնագիտությունը հասել էր զարգացման մի այնպիսի աստիճանի, երբ նրա հայտնագործություններին բավարար բացատրություն տալու համար մատերիալիզմը պետք է նոր ձև ընդուներ։ Այդ նոր, բարձրագույն ձևը, որին բնագիտությունն ինքը հանգում էր երկար ու դժվարին երերումներով ու խարխափումներով, անհրաժեշտաբար պետք է լիներ դիալեկտիկական մատերիալիզմը։ Մատերիալիզմի հին ձևի բացասումը բուրժուական փիլիսոփայությունն աշխատում էր ներկայացնել իբրև առհասարակ մատերիալիզմի ժիտում։ Վ. Ի. Լենինին վիճակվեց պատմական կարևորագույն խնդիր, այն է՝ ապացուցել, որ բնագիտության նվաճումները, փիլիսոփայական ընդհանրացումների մեջ անհրաժեշտաբար հասցնելով դիալեկտիկական մատերիալիզմին, բնավ էլ չեն ժխտում նաև մատերիալիզմն ընդհանրապես, այլ միայն դրսևորում են մետաֆիզիկական մատերիալիզմի սահմանափակությունը և միաժամանակ աներկբայորեն ցույց են տալիս ամեն մի իդեալիզմի սնանկությունը։

Նոր ժամանակաշրջանի կարևոր առանձնահատկությունն այն էր, որ բնագիտության զարգացման շնորհիվ բարձրացող փիլիսոփայական պրոբլեմներն իմացաբանական բնույթ էին կրում։ Սակայն դա չի նշանակում, թե այդ պրոբլեմներն ինքնին և դրանց այս կամ այն լուծումը միայն նեղ-իմացաբանական նշանակություն ունեին։ Իմացաբանությունը դարձել էր մատերիալիզմի և իդեալիզմի պայքարի գլխավոր թատերաբեմը. այս բնագավառում լուծվող աշխարհայացքային խնդիրների նկատմամբ ցուցաբերվող տարբեր մոտեցումները գիտության մեջ և հասարակական կյանքում ծավալված պայքարի փիլիսոփայական արտահայտությունն էին։

***

Մատերիալիզմի իմացաբանությունն արտացոլման տեսություն է։ Դա նշանակում է, որ այդ իմացաբանության ելակետային գրույթը ամեն մի մտածողությունից անկախ և զուրս գտնվող օբյեկտիվ ռեալության ընդունումն է, որի արտացոլումը, արտապատկերումն են զգայություններն ու իդեաները։ Այս պարզ ճշմարտությունը իր այս պարզ ըմբռնմամբ դարեր շարունակ բավարարել է բնագիտությանը, որի հիմքը եղել ու մնում է մատերիալիզմը, մեծ մասամբ չգիտակցված, տարերային, կամ, ինչպես երբեմն Վ. Ի. Լենինն է ասում, բնապատմական մատերիալիզմը։ Բուն փիլիսոփայության մեջ այդ ճշմարտության շուրջը վաղուց ի վեր բորբոքված բուռն վեճերը, նրա պարզ ըմբռնման դեմ առաջ քաշված բազմաթիվ, հաճախ շատ խելացի կերպով պատճառաբանված, առարկությունները ի վիճակի չեղան սասանելու բնագիտների հավատը այդ դրույթի իսկության նկատմամբ, մինչև որ բնագիտությունն իր իսկ զարգացմամբ չցուցադրեց, թե ինչպիսի դժվարություններ են Բարնվում այդ արտաքին պարզության ետև։

Բնագետների առջև առաջին դժվարությունը ծագեց տեսության, տեսական ընդհանրացումների հարցի կապակցությամբ։

Նախորդ դարի 70-ական թվականներից սկսած, հատկապես Մենդելեևի մեծագույն հայտնագործությունից հետո, գիտությունը, մասնավորապես ֆիզիկան, աստիճանաբար սկսեց անցնել տեսական այնպիսի մեթոդների, որոնք հիմնված են հիպոթեզների բազմակողմանի ու լայն կիրառման վրա։ Ի դեպ, տեսությունը և գիտական հիպոթեզները կարևոր դեր էին խաղում նաև բնագիտության զարգացման նախորդ շրջանում։ Այդ տեսությունների ու հիպոթեզների հատկանշական գիծն այն էր, որ դրանց միջոցով բացատրվող կամ ենթադրվող երևույթների համակարգը նույնքան առարկայական էր, որքան ղգայաբար ընկալելի երևույթները. այդ համակարգը հնարավոր էր եթե ոչ վերարտադրել իրականության մեջ, ապա գոնե մտապատկերել առարկայական ձևով։ Նոր սկսված ժամանակաշրջանում խոսքն այնպիսի տեսությունների ու հիպոթեզների մասին էր, որոնք վերաբերում են ղգայաբար ընկալելի երևույթների բազմազանության հիմքում ընկած, բայց այդպիսի ընկալելիությամբ չօժտված համակարգի գործունեությանը, առհասարակ մատերիայի կառուցվածքին, նրա զարգացման ընդհանուր ձևերին և օրենքներին, այսինքն՝ այնպիսի տեսությունների և հիպոթեզների մասին, որոնք արտաքուստ հիշեցնում են բնագետների կողմից մերժված բնափիլիսոփայական կառուցումները։ Բայց եթե բնափիլիսոփայական այդ նախկին կառուցումները մտահայեցողական էին (որ և բնագետների կողմից դրանց մերժման պատճառն էր), ապա նոր տեսական մեթոդները հանգչում էին էքսպերիմենտալ հիմքի վրա։ Ավելին, եթե բնափիլիսոփայական մտահայեցողական կառուցումներն արտահայտում էին փիլիսոփայի ձգտումը՝ տալու «բնության սիստեմի» սեփական մեկնաբանությունը, ապա տեսական նոր մեթոդները ծնունդ առան նորահայտ ֆիզիկական երևույթները մեկնաբանելու անհրաժեշտությունից, ատոմային ու ներատոմային պրոցեսների ուսումնասիրության շեմքին կանգնած ֆիզիկայի ներքին կարիքներից։ Տեսական այդ նոր մեթոդներն իրենց իրավացիությունն ու կենսունակությունն ապացուցեցին դեռ նախորդ դարի վերջին քառորդում, երբ նրանց օգնությամբ տեսականորեն ապացուցվեց էլեկտրամագնիսական ալիքների գոյությունը (Մաքսվելի կողմից)՝ այդ ալիքների փորձնական հայտնաբերումից (Հերց) քսան տարի առաջ և երբ, վերջապես, այդ նույն մեթոդների օգնությամբ ենթադրվեց, իսկ ապա հայտնագործվեց «անզգայելի մասնիկների» աշխարհը՝ միկրոաշխարհը։

Հիշյալ տեսական մեթոդների հատկանշական գիծը մաթեմատիկական ապարատի լայն օգտագործումն է։ Նոր հայտնագործված «անզգայելի» աշխարհի մեջ տեղի ունեցող պրոցեսներն արտահայտվում են մաթեմատիկական հավասարումներով, նրանցից շատերը կանխատեսվել են փորձնական երևույթներից ստացված տվյալների մաթեմատիկական մշակման շնորհիվ։ Եթե ֆիզիկական տեսությունը սահմանափակվի միայն այդքանով, ապա կստացվի, որ ֆիզիկական գիտության բովանդակությունը կազմում են, նախ, փորձում տրված երևույթների նկարագրությունը և, ապա, ստացված տվյալների մաթեմատիկական մշակումն ու որոշակի հավասարումների դուրս բերումը։ Բայց ֆիզիկայի տեսությունը իրականում, բացի այդ, ներառնում է նաև այլ բովանդակալից մաս՝ տեսական հետևություններ կամ ենթադրություններ (հիպոթեզներ) մա-

թեմատիկական հավասարումների միջոցով արտահայտված երևույթների կոնկրետ ֆիզիկական բնույթի մասին։

Եվ ահա մեր դարի սահմանագլխին իրենց իսկ բնագետների շրջանում վեճի առարկա դարձավ այն հարցը, թե արդյոք հարկ կա՞ ֆիզիկական տեսության մեջ, մաթեմատիկական ապարատից բացի, մտցնել նաև կոնկրետ ֆիզիկական բովանդակություն ունեցող ընդհանրացումներն ու հիպոթեզները։ Չէ՞ որ վերջիններս անմիջականորեն չեն օգնում կոնկրետ ֆիզիկական հետազոտությանը, որը կարող է լիովին բավարարվել փորձում տրված երևույթների նկարագրությամբ ու տվյալների մաթեմատիկական մշակումով, ասում էին բնագետներից ոմանք։ Բնագետների անհամեմատ ավելի խոշոր մասը ֆիզիկան չէր էլ պատկերացնում առանց կոնկրետ ֆիզիկական բովանդակության, ուրեմն՝ առանց այնպիսի տեսությունների ու հիպոթեզների, որոնք բացատրում ու նկարագրում էին մաթեմատիկական հավասարումների միջոցով տրված իրականությունը։ Այս երկու հարցադրումների տարբերությունը սոսկ աշխարհայացքային չէր. ընդհակառակը, աշխարհայացքային վեճն արդյունք էր ֆիզիկայի մասնագիտական խնդրի շուրջը ծագած այն վեճի, թե ի՞նչ մեթոդոլոգիա ընտրել, թե ֆիզիկայի զարգացման գործում ինչպիսի՞ տեղ հատկացնել մաթեմատիկական ֆիզիկային՝ նեղ իմաստով, և տեսական ֆիզիկային՝ լայն առումով։ Այսպիսով ֆիզիկայի մեջ անմիջականորեն ու ակնառու կերպով դրսևորվեց դարավոր վեճը մատերիալիզմի և իդեալիզմի միջև։ Ընդ որում այս անգամ, ինչպես այդ ակնբախ է, վեճի ասպարեզը իմացաբանությունն էր. ապացուցելու համար, որ օբյեկտիվ իրականությունն է արտացոլվում տեսական ընդհանրացումների մեջ և մաթեմատիկական հավասարումների միջոցով, անհրաժեշտ էր ցույց տալ, թե իրականության արտացոլումը տեսության մեջ ինչո՞ւ է այդպիսի ձև ընդունում և ինչպե՞ս պետք է հասկանալ տեսության համապատասխանությունը նրանում արտացոլված օբյեկտիվ իրականությանը։

Վ. Ի. Լենինը, վերլուծելով բնագիտության առջև ծառացած փիլիսոփայական կարգի դժվարությունները, ցույց տվեց, որ այդ հարցին մատերիալիստորեն պատասխանելու համար անհրաժեշտ է իմացությունը դիտել որպես դիալեկտիկորեն ընթացող պրոցես։ Իրականության արտացոլումը մարդու գիտակցության մեջ պետք է դիտել ոչ թե որպես հայելային, «մեռյալ» արտապատկերում, այլ «շարժման, հակասությունների առաջացման ու դրանց լուծման հավիտենական պրոցեսի մեջ»[1]։ Իմացության շարժումը զգայական արտապատկերումից դեպի վերացական միտքը ընդգրկում է զգայականության բացասում. եթե կենդանի հայեցողության նույնիսկ բարձրագույն ձևը՝ մտապատկերն օժտված է առարկայական կոնկրետությամբ, ապա վերացական միտքը զուրկ է «զգայական նյութից»։ Բայց այդ վերացականությունը, զգայականության բացասումը միաժամանակ հանդիսանում է մտքի առավելությունը։ Չէ՞ որ ինքը բնությունը «և՛ կոնկրետ է, և՛ աբստրակտ, և՛ երևույթ է, և՛ էություն»[2]։ Բացասելով կենդանի հայեցողության առարկայական կոնկրետությունը, միտքը, շնորհիվ իր վերացականության, արտացոլում է էությունը՝ առարկայնորեն կոնկրետ երևույթների այլազանության մեջ եղած այն ընդհանուրն ու ան-

[1] Վ. Ի. Լենին, Փիլիսոփայական տետրեր, Մ., Պետքաղհրատ, 1947, էջ 168 (ռուս. հրատ.)։
[2] Նույն տեղում, էջ 180։

հրաժեշտը, որը օբյեկտիվ աշխարհի զարգացման «ներքին տրամաբանությունն» է հանդիսանում։

Այսպիսով, իմացության երկու աստիճանների միջև էական տարբերություն կա ինչպես ձևի, այնպես էլ իրականության այս կամ այն կողմի արտացոլման տեսակետից. իմացության զգայական աստիճանը ըստ ձևի առարկայորեն կոնկրետ է, ըստ արտացոլման՝ հանդիսանում է իրականության երևույթների արտապատկերումը, իսկ իմացության տրամաբանական աստիճանը (միտքը) ըստ ձևի ընդհանուր է ու վերացական, իսկ արտացոլման տեսակետից՝ թափանցում է երևույթների խորքը, նրանց էության մեջ։

Բայց իր վերացականությամբ, զգայականության իր բացասմամբ միտքն արդյոք չի՞ հեռանում իրականությունից։ Որոշ իմաստով մտապատկերն ավելի մոտ է կանգնած իրականությանը՝ որպես երևույթների առարկայական արտապատկերում, բայց իմացության տեսակետից՝ բացատրելու և ըմբռնելու առումով միտքն է անընդհատ մոտենում իրականությանը, որովհետև անցողիկ երևույթների մեջ արտացոլում է մնայունը, պատահականությունների մեջ՝ անհրաժեշտն ու օրինաչափը, այսինքն՝ տալիս է գիտելիքներ, որոնք համընդհանրությամբ են օժտված, կիրառելի են ամեն անգամ, երբ համապատասխան պայմանների առկայության դեպքում առաջանում են տվյալ կարգի երևույթներ։ «Մտածողությունը, եթե այն ճիշտ է..., կոնկրետից բարձրանալով դեպի աբստրակտը, չի հեռանում ճշմարտությունից, այլ մոտենում է նրան»[1], ասում է Լենինը։

Իմացության դիալեկտիկական բնույթն ըմբռնել հնարավոր է միայն, եթե ինքը՝ արտացոլվող իրականությունը ևս ըմբռնվում է որպես դիալեկտիկական։ Երբ ըմբռնվում է, որ իրականության մասնակի երևույթների կոնկրետ բազմազանության մեջ դրսևորվում է նրանց զարգացումը պայմանավորող ընդհանուրն ու միասնականը, ապա հասկանալի է դառնում նաև, թե մարդու գիտակցության մեջ այդ ընդհանուրի արտացոլումը ինչո՞ւ պետք է վերացական, ոչ-զգայական ձև ստանա։ Չէ՞ որ իրականության մեջ ևս ամեն մի օրինաչափը և անհրաժեշտը, ասենք, տիեզերական ձգողականությունը, գոյություն ունի ոչ թե որպես առարկայական անմիջական կեցություն, այլ՝ առանձին երևույթների մեջ իր դրսևորումների ձևով՝ որպես մոլորակների շարժման, քարի անկման և այլ երևույթների մի կողմը։ Ուրեմն նրա արտացոլումը ևս, ճշմարիտ լինելու համար, պետք է առարկայական անմիջականությունից ու եզակիությունից զերծ լինի։

Իմացության պրոցեսի դիալեկտիկայի խորը ըմբռնումը Վ. Ի. Լենինին թույլ տվեց բացահայտելու իդեալիզմի իմացաբանական արմատները։ Հենց այն հանգամանքը, որ մտքի մեջ արտացոլվում է էականը՝ ընդհանուրն ու միասնականը, անհրաժեշտն ու օրինաչափը, և այն էլ արտացոլվում է վերացականորեն, «զգայական նյութից» զուրկ, հնարավորություն է ստեղծում, որ այն կտրվի առարկայական կոնկրետությունից և դրվի առանձին երևույթների հիմքում, ընդ որում այդ դեպքում աշխարհի օրինաչափ կարգի առարկայորեն կոնկրետ դրսևորումները կդիտվեն որպես մտքի իրականացումներ։ Սա այն ընդհանուրն է, որ կիրառելի է ամեն մի իդեալիզմի նկատմամբ. ամեն մի իդեալիզմ բնությունը չի վերցնում որպես անմիջականորեն տրված, որպես դնո-

[1] Վ. Ի. Լենին. *Փիլիսոփայական տետրեր*, էջ 146։

սեոլոգիայի ելակետ։ «Փաստորեն դեպի բնությունը տանում է դեռևս մի երկար անցում «հոգեկանի» աբստրակցիաների միջով։ Միևնույն է, թե ինչպես անվանել այդ աբստրակցիաները՝ բացարձակ իդեա՞, թե ունիվերսալ ես, համաշխարհային կամք և այլն, և այլն։ Սրանով տարբերվում են իդեալիզմի տարատեսակությունները»[1]։ Ըստ իդեալիզմի, միտքն է ստեղծագործում աշխարհը. միայն թե օբյեկտիվ իդեալիզմը այդ միտքը (իդեան) օբյեկտիվորեն է նախադրում բնությանը, որից այնուհետև դուրս է բերում ճանաչող սուբյեկտի գիտակցությունը, իսկ սուբյեկտիվ իդեալիզմը բնությունն ածանցում է ճանաչող սուբյեկտի գիտակցությունից։

Իդեալիզմի բուն էությունից բխում է մատերիայի հանգեցումն իդեալականին և վերջիվերջո նրա ժխտումը, որովհետև եթե միտքն (իդեան) է կառուցում աշխարհը, ապա նշանակում է բնության էությունը՝ նրա զարգացման ներքին «տրամաբանությունը» իրեն իսկ իդեայի տրամաբանությունն է, որ դրսևորում է իրեն առանձին առարկաների բազմազանության մեջ։ Բնությունը «չհասունացած բանականություն» է, որը մարդկային իմացության միջոցով վերգտնում է իրեն, ասում է Շելինգը։ Բնությունը բացարձակ իդեայի այլակեցությունն է, մի անցումնային աստիճան դեպի մարդկային գիտակցությունը՝ ըստ էության բացարձակ իդեայի այդ ինքնագիտակցումը, ասում է Հեգելը։ «Միակ իրը, որի գոյությունը մենք ժխտում ենք, այն է, ինչ փիլիսոփաներն անվանում են մատերիա», ասում է Բերկլին։

Փիլիսոփայական-իմացաբանական այն դատողությունները, որոնցով «ապացուցվում» էր մատերիայի ժխտումը, միշտ խորթ էին մնում բնագետներին։ Բայց ահա մեր դարագլխին, երբ բնագետներն ընդհուպ մոտեցան իմացաբանական հարցերի լուծման, նրանցից ոմանք նույնպես այդպիսի հայտարարություններով հանդես եկան։ Առաջնային տվյալը «աշխարհի էլեմենտներն» են՝ զգայությունների տվյալները, ասում էր Մախը, իսկ մատերիան մտահայեցողական տերմին է, որ առաջ է գալիս տեսական ընդհանրացումների ժամանակ, երբ փիլիսոփաներն աշխատում են այդ ընդհանրացումների մեջ տեսնել զգայություններից դուրս գտնվող մի իրողություն։ Բնագետները պետք է աշխատեն իրենց աշխարհայեցողությունը կառուցել «բացառապես տեսական նյութից, բոլորովին չզգվելով մատերիայի հասկացությունից», ձայնակցում էր Օսվալդը։

Բնագետների շրջանում տեղ գտած այս իդեալիզմը իր բնույթով ոչնչով չի տարբերվում փիլիսոփայական իդեալիզմից. դա նույն այն պնդումն է, որ միտքը կառուցում է աշխարհը, և ոչ թե արտացոլում այն։ Մատերիան, որպես մտքից (իդեայից) անկախ իրողություն, չքանում է. մնում է սոսկ միտքը՝ տվյալ դեպքում մաթեմատիկական այն հավասարումները, որոնք աշխարհի միակ ֆիզիկական բովանդակությունն են կազմում։

«Մատերիայի չքացման», հետևաբար՝ մատերիալիզմի ժխտման վերաբերյալ մեր դարասկզբին վերածնված պնդումները ելնում էին հակադիալեկտիկական՝ մետաֆիզիկական իմացաբանական ելակետային դրույթներից։ Թե՛ իդեալիստական փիլիսոփայական ուսմունքները (պոզիտիվիզմը, մախիզմը, էմպիրիոսիմվոլիզմը), թե՛ «ֆիզիկական» իդեալիստները մատերիան և մատերիալիզմը ժխտելիս հիմնվում էին այն բանի վրա, որ մտքի արգասիքները,

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 14, էջ 412։

տվյալ դեպքում տեսական ընդհանրացումները և մաթեմատիկական աբստրակցիաները, լինելով «զգայականությունից զուրկ», չեն կարող իրենց բովանդակությամբ օբյեկտիվ լինել, ինչպես այդ պնդում է մատերիալիզմի արտացոլման տեսությունը, որովհետև, իրենց իսկ մատերիալիստների ասելով, օբյեկտիվ իրականության մեջ վերզգայական ոչինչ չկա։

Բայց գո՞ւցե իդեալիզմի հիմքի վրա մշակված դիալեկտիկական իմացաբանությունն այլ փաստարկ ունի մատերիալիզմի դեմ։ Իդեալիստական դիալեկտիկայի կարկառուն ներկայացուցչի՝ Հեգելի «Տրամաբանության գիտության» և «Փիլիսոփայության պատմության վերաբերյալ դասախոսությունների» իր կոնսպեկտներում Լենինը հատուկ ուշադրություն է նվիրում այս հարցին։

Իրավացիորեն նշելով, որ մատերիան առհասարակ՝ որպես համընդհանրություն, զգայություններում անմիջականորեն տրված չէ (զգայելի են սոսկ մատերիայի կոնկրետ ձևերը), այլ հանդիսանում է մտքի զուտ արդասիքը և վերացականություն, Հեգելը գրում է, թե մատերիալիզմը տրամաբանական հակասության մեջ է ընկնում իր իսկ ելակետի հետ, ժխտում է ինքն իրեն, ընդունելով, որ մատերիան գոյություն ունի օբյեկտիվորեն։ Դա, ասում է Հեգելը, ըստ էության նշանակում է զգայական աշխարհից դատ վերզգայական իրողության ընդունում, հետևաբար՝ փաստարկ է ընդդեմ մատերիալիզմի և հօգուտ իդեալիզմի։

Դժվար չէ տեսնել, որ այս հարցում թե՛ մետաֆիզիկ իդեալիստները, թե՛ դիալեկտիկ Հեգելը միատեսակ են դատում՝ դիալեկտիկային հակառակ դիրքերից։

Նախ, նրանք երկուսն էլ ելնում են այն դրույթից, որ եթե օբյեկտիվ բովանդակություն է վերագրվում վերացական մտքին, ապա իրականության մեջ այդ բովանդակությունն ինքը պետք է նույնպիսի իդեալականությամբ օժտված լինի, նույնքան «զերծ լինի զգայականությունից», որքան ինքը միտքը, որն արտացոլում է այն։ Իդեալիզմի վերաբերմամբ սա իսկույն ևեթ հասկացվում է. նա իդեալական է համարում երևույթների խոր էությունը, նրանց հիմքում ընկած օրինաչափն ու անհրաժեշտը, այսինքն՝ այն, ինչ աբստրակտ մտածողությամբ է ճանաչվում։ Ավելին, լինելով դիալեկտիկներ, բայց իդեալիստներ, Շելինգը և Հեգելը գտնում էին, որ եթե իդեալականը ընկած չլիներ զգայական երևույթների առաջացման ու զարգացման հիմքում, հնարավոր չէր լինի միտքը՝ իդեալականը որպես սուբյեկտիվություն։

Մյուս կողմից, իդեալիստական այս քննադատությունը չի ժխտում մատերիալիզմն առհասարակ. չէ՞ որ մատերիալիզմը, իմացության հիմքում դնելով բնությունը, դրանով իսկ վճռում է ամեն մի իդեալականի նկատմամբ նրա առաջնայնության հարցը, իմացության աղբյուրի հարցը, բայց չի կանխասվճռում այն հարցը, թե ինչո՞ւ է բնության արտացոլումը իդեալական ձև ստանում։ Իդեալիզմը միտումնավոր կերպով շփոթում է այս երկու հարցերը, ղրկարտում է մատերիալիզմին, գրում է Լենինը։ «Հասկացության անհրաժեշտությունը» մի նշույլ անգամ չի «ոչնչացվում» իմացության ու հասկացության աղբյուրի մասին ուսմունքով»[1]։ Սակայն իդեալիստական այս քննադատությունը, չժխտելով մատերիալիզմը, միաժամանակ ցույց է տալիս մեթոդի–

[1] Վ. Ի. Լենին, Փիլիսոփայական տետրեր, էջ 272։

գիկական մատերիալիզմի սահմանափակությունը, որն անկարող էր բացատրել, թե ինչու միտքը որքան ավելի է խորանում իրականության էության մեջ, այնքան ավելի է ղրկվում «զգայական նյութից»։

Մատերիալիստական հիմքի վրա կառուցված դիալեկտիկական իմացաբանությունը լիովին հետևողական է։ Նրա համար, ի տարբերություն մետաֆիզիկական մատերիալիզմի, միանգամայն բացատրելի է վերացական մտքի կողմից զգայական աշխարհի ավելի ու ավելի խոր իմացումը։ Այս կողմից, ի հակադրություն իդեալիստական դիալեկտիկայի, նրա համար հարկ չկա մտքի իդեալականությունը բացատրելու համար իդեալականը դնել իրականության հիմքում. նրա՝ որպես հետևողական դիալեկտիկական ուսմունքի համար ոչինչ տարօրինակ չկա այն բանում, որ, ծագելով մատերիական հիմքի վրա, միտքը իդեալական ձև է ստանում։

Այսպիսով, «լինելով դիալեկտիկայի կողմնակից, Հեգելն այնուամենայնիվ չկարողացավ հասկանալ դիալեկտիկական անցումը... մատերիայից դեպի գիտակցություն»[1]։ Միակ հետևողական դիալեկտիկան մատերիալիստական դիալեկտիկան է։

Դեռ Լենինի կենդանության օրոք ձևավորված ժամանակակից գիտության նվաճումների մատերիալիստական ըմբռնման և նորագույն սուբյեկտիվ-իդեալիստական ու ագնոստիկական ուսմունքների քննադատության համար անգնահատելի նշանակություն ունի Լենինի կողմից ճշմարտության ուսմունքի զարգացումը։

Մատերիալիզմի իմացաբանությունից՝ արտացոլման տեսությունից տրամաբանական անհրաժեշտությամբ բխում է օբյեկտիվ ճշմարտության գաղափարը, այն է՝ մարդկային մտապատկերների, հասկացությունների, տեսությունների մեջ այնպիսի բովանդակության ընդունումը, որը կախում չունի մարդուց ու մարդկությունից. այդ դրանցում արտացոլված օբյեկտիվ իրականությունն է։ Այլ հարց է, թե ո՞րքանով է այդ ճշմարտությունը անփոփոխ, ամբողջական ու վերջնական, այն է՝ բացարձակ և հարաբերական ճշմարտության փոխհարաբերությունը։ Պահանջելով չշփոթել այս երկու հարցերը, Լենինը դրանք չէր անջրպետում միմյանցից, ընդհակառակը, դիալեկտիկայի վարպետ կիրառումով ցույց էր տալիս, թե ինչպես է երկրորդ հարցի այս կամ այն լուծումն անդրադառնում օբյեկտիվ ճշմարտության ըմբռնման, ընդունման կամ մերժման վրա։

Կյանքն էր, որ Վ. Ի. Լենինին դրդեց դնելու այս հարցը, որոնելու և նշելու նրա նրբությունները։ Բնագիտությունը թափանցել էր ատոմային ու ներատոմային պրոցեսների աշխարհը, որտեղ գործ ուներ այնպիսի փոխազդեցությունների և այնպիսի արագությունների հետ, որոնք պահանջում էին շատ դեպքերում հիմնովին վերանայել կայունացած հասկացությունները կամ, առնվազն, սահմանագծել դրանց կիրառության շրջանակները։ Ակնբարի էր դարձել մարդկային դիտելիքների հարաբերականությունը, «մի սկզբունք, որն առանձին ուժով փաթաթվում է ֆիզիկոսների վզին հին թեորիաների խիստ բեկման շրջանում և որը, դիալեկտիկան չիմանալու պարագայում,— անխուսափելիորեն տանում է դեպի իդեալիզմ»[2]։

---

[1] Վ. Ի. Լենին, Փիլիսոփայական տետրեր, էջ 264։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 14, էջ 412։

Իսկ ո՞րն է այն դիալեկտիկական մոտեցումը, որն ապահովում է հարցի մատերիալիստական լուծումը։

Այն գիտելիքները, որոնք ապացուցված են տեսականորեն և հաստատված տարիների փորձով, օբյեկտիվ ճշմարտություն են՝ իրականությանը համապատասխանելու իմաստով։ Բայց այդ համապատասխանությունը վերջնական ու լրիվ համընկնում չէ. այն սահմանափակ է իր կիրառելիության շրջանակներով, տվյալ ժամանակաշրջանի գիտելիքների ընդհանուր մակարդակով, մոտավոր ու ոչ լրիվ է իր ճշգրտությամբ, թերավարտ է ու ոչ սպառիչ՝ աշխարհի վերջնական պատկերը տալու համար։ Այդ իմաստով այն հարաբերական ճշմարտություն է։ Իսկ իրականությունը տվյալ շրջանակներում, տվյալ խորությամբ ու ճշգրտությամբ պատկերելու, աշխարհի ոչ-վերջնական, բայց անընդհատ լրացվող պատկերը տալու իմաստով այդ գիտելիքը բացարձակ է։ Ուրեմն խոսքն այն մասին չէ, թե գիտելիքների մի խումբը հարաբերական ճշմարտություն է, մյուսը՝ բացարձակ. հարաբերական և բացարձակ ճշմարտության կատեգորիաներն արտահայտում են օբյեկտիվորեն ճշմարիտ ամեն մի գիտելիքի մեջ եղած երկու մոմենտների դիալեկտիկական փոխհարաբերությունը։

Այսպիսով, դիալեկտիկան ևս, ասում է Լենինը, իր մեջ պարունակում է ռելյատիվիզմի, բացասման, սկեպտիցիզմի մոմենտ, բայց (և այդ շատ կարևոր է) չի հանգում ռելյատիվիզմի. «օբյեկտիվ դիալեկտիկայի համար ռելյատիվի մեջ կա բացարձակը»[1], այսինքն՝ այդ դիալեկտիկան «մեր բոլոր գիտելիքների հարաբերականությունը ճանաչում է ոչ թե օբյեկտիվ ճշմարտության բացասման իմաստով, այլ մեր գիտելիքներն այդ ճշմարտությանը մոտենալու սահմանների պատմական պայմանավորվածության իմաստով»[2]։

Հարցի այսպիսի լուծումից անմիջականորեն բխում է ճշմարտության կոնկրետության մարքս-լենինյան դրույթը։ Եթե ամեն մի գիտական հասկացություն, գիտության հայտնագործած ամեն մի օրենք հարաբերական է իրականության էության մեջ թափանցելու խորությամբ, երևույթների այս կամ այն կողմն արտացոլելու իմաստով, ապա այդ շրջանակներից դուրս հիշյալ հասկացությունն ու օրենքը զրկվում է ճշմարտությունից։ Այս միտքը Լենինը ձևակերպում է «վերացական ճշմարտություն չկա, ճշմարտությունը միշտ կոնկրետ է»[3] ֆորմուլով, որի մեջ «վերացականություն» ասելով հասկացվում է այնպիսի համընդհանրություն, որն ընդգրկեր իրականության բոլոր դեպքերն ու բոլոր ժամանակները, ըստ էության՝ վեր կանգնած լիներ ամեն մի ժամանակից ու պայմաններից։ Իսկ այդպիսի համընդհանրությունն ընդունելը նշանակում է ժխտել իրականության անվերջ բազմազանությունը և, մյուս կողմից, գտնել, թե գիտությունը մի ժամանակ կարող է ավարտված համարել իրականության իմացման իր խնդիրը։ Գիտելիքների մեջ հարաբերական ճշմարտության մոմենտի ժխտման հետևանքով է, որ մոռացվում է ճշմարտության կոնկրետությունը և այն վեր է ածվում վերացական ճշմարտության՝ բոլոր պայմաններում ու միշտ իրավացի բացարձակ ճշմարտության։ Սա մետաֆիզիկայի տեսակետն է։

Բայց մետաֆիզիկան մի այլ, արտաքուստ շատ տարբեր, դրսևորում էլ

---

[1] Վ. Ի. Լենին. *Փիլիսոփայական տետրեր*, էջ 328։

[2] Վ. Ի. Լենին. *Երկեր*, հ. 14, էջ 172։

[3] Վ. Ի. Լենին. *Երկեր*, հ. 32, էջ 103։

ունի. դա ռելյատիվիզմն է, այս անգամ արդեն բացարձակ ճշմարտության ժխտումը։

Բնագետների մի մասը գիտելիքների հարաբերական բնույթն ընկալեց որպես դրանց հարաբերականություն բացարձակորեն, որպես այնպիսի հարաբերականություն, որը մեզ թույլ չի տալիս խոսելու օբյեկտիվ իրականությանը գիտելիքի համապատասխանության մասին. էլ ի՞նչ համապատասխանության մասին կարող է խոսք լինել, երբ ամեն մի գիտելիք ճշգրիտ չէ, մոտավոր է, վերջնական չէ, թերավարտ է, այսպես կարելի է ամփոփել այդպիսի բնագետների մտածելակերպը։ Ավելին, քանի որ գիտելիքների մեջ հարաբերականության մոմենտի դրսևորումը խորտակեց մետաֆիզիկական աշխարհայացքը և նրա սկզբունքներով կառուցված՝ աշխարհի մեխանիստական պատկերը, ապա ոչ մի երաշխիք չկա, մտածում էին այդպիսի բնագետները, թե այլ սկզբունքների վրա հիմնված աշխարհայացքը և աշխարհի պատկերը նույն բախտին չեն արժանանա։

Այդպիսի բնագետները և նրանց դժվարությունների հողի վրա աճած փիլիսոփայական ուսմունքները սրանից եզրակացնում էին, որ ֆիզիկական տեսությունների և ընդհանրապես մեր գիտելիքների վերաբերմամբ անիմաստ է ճշմարիտ կամ կեղծ լինելու հարց դնելը. դրանց մասին լոկ կարելի է ասել, որ դրանք ավելի կամ պակաս հարմար են։ Այսպես, ըստ այդ տեսակետի, մեխանիստական տեսություններն իրավացի էին այնքանով, որ բավարարում էին ժամանակի գիտությանը, իսկ նրանց փոխարինելու եկող տեսությունները նույնքան իրավացի են, քանի որ համապատասխանում են այսօրվա գիտության պահանջներին։ Բայց թե՛ մեկի, թե՛ մյուսի մասին չի կարելի ասել, որ դրանք ճշմարիտ են՝ օբյեկտիվ իրականությանը համապատասխանելու առումով։ Ճշմարտության հարցն իմաստազուրկ է, գրել է խոշոր մաթեմատիկոս Պուանկարեն. «Դա նույնը կլիներ, եթե հարց դնեին, թե ո՞րն է ավելի ճշմարիտ՝ մետրիկ սիստե՞մը, թե հին չափերը, կամ էլ դեկարտյան կոորդինատնե՞րը, թե բևեռային։ Մի երկրաչափություն չի կարող ավելի ճշմարիտ լինել, քան մեկ ուրիշը. այն սոսկ կարող է ավելի հարմար լինել»[1]։ «Ֆիզիկայի օրենքը, իսկապես ասած, ճշմարիտ չէ և ոչ սխալ, այլ մոտավոր է», պնդում էր ֆիզիկոս Դյուհեմը[2]։

Ինչպես տեսնում ենք, մեր գիտելիքների մեջ եղած բացարձակ ճշմարտության մոմենտը ժխտելը, դրանք որպես միմիայն հարաբերական գիտելիքներ դիտելը վերջիվերջո հանգեցնում է օբյեկտիվ ճշմարտության ժխտման, իսկ դա, ասում է Լենինը, տանում է դեպի ագնոստիցիզմ և ավելի հեռուն՝ սուբյեկտիվիզմ։

Բայց ո՞րն է երաշխիքն այն բանի, որ մեր գիտելիքները միմիայն հարաբերական՝ մոտավոր, ոչ-ճշգրիտ, անցողիկ չեն, այլ միաժամանակ բացարձակ ճշմարտություն են՝ թեկուզ և որոշ առումով, որոշ շրջանակներում, որոշ խորությամբ, ընդ որում այդ շրջանակներն անընդհատ լայնանում են, գիտելիքը՝ խորանում։ Այդ երաշխիքը պրակտիկան է, մեր գիտելիքների նյութական մարմնավորումը և ռեալ, շոշափելի արդյունքների ստացումը, որոնք բավական են արդեն ապացուցելու, որ այդ գիտելիքները օբյեկտիվ ճշմարտություն

[1] Ա. Պուանկարե, Գիտությունը և հիպոթեզը, Մ., 1904, էջ 61 (ռուսերեն)։
[2] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 14, էջ 415։

են։ Այնքանով, որքանով պրակտիկան արդարացնում է մեր գիտելիքները, այդքանով այդ գիտելիքների համապատասխանությունն իրականությանը բացարձակ է, իսկ այնքանով, որքանով որ նա պահանջում է դրանց ճշգրտում ու լրացումներ, այդքանով այդ գիտելիքները հարաբերական են։ Հետևելով Մարքսին, Լենինը բազմիցս նշում էր, որ օբյեկտիվ ճշմարտության հարցը տեսական վեճերով չէ, որ լուծվում է. պրակտիկայում պետք է մարդն ապացուցի իր մտածողության ճշմարիտ լինելը։ Այս տեսակետից չափազանց մեծարժեք են պրակտիկայի և իմացության պրոցեսի փոխհարաբերության վերաբերյալ մարքսյան գրույթների պարզաբանումն ու կոնկրետացումը Լենինի կողմից։

Մինչմարքսյան ամբողջ փիլիսոփայության համար իմացության պրոցեսը նույնանում էր տեսական, մտածական գործունեության հետ։ Մարքսը և Էնգելսը պրակտիկայի չափանիշը մտցրին իմացաբանության հիմքի մեջ, դրանով իսկ իրականությանը մարդկային գիտելիքների համապատասխանության հարցը՝ օբյեկտիվ ճշմարտության հարցը դուրս բերելով սխոլաստիկական-մտահայեցողական վեճերի շրջանակներից։ Դրանով հիմնովին փոխվեց նաև իմացության պրոցեսի ըմբռնումը. եթե իմացության նպատակը ճշմարտության, այն է՝ իրականությանը համապատասխանող գիտելիքի, հասնելն է, ապա իմացման պրոցեսը ավարտված համարել չի կարելի, քանի դեռ ձեռք չի բերվել այդ համապատասխանության ապացուցումը, իսկ դա, ըստ մարքսիզմի, մտածողության հարցը չէ, այլ պրակտիկայի։ Ուրեմն, օբյեկտիվ ճշմարտության իմացությունը ոչ միայն մարդու ուղեղում տեղի ունեցող տեսական-մտածողական պրոցես է, այլև մի պրոցես, որը ներթափանցում է նրա պրակտիկ-նյութական գործունեությունը։ «Ճշմարտությունը պրոցես է։ Մարդը սուբյեկտիվ իդեայից դեպի օբյեկտիվ ճշմարտություն է գնում «պրակտիկայի» (և տեխնիկայի) միջով»[1]. ձևակերպում է Լենինն իր միտքը՝ մատերիալիստորեն կարդալով Հեգելին։ Եվ, վերջապես, նույն միտքն է նա անցկացնում իմացության պրոցեսի իր հակիրճ, բայց խորիմաստ, կլասիկ դարձած նկարագրի մեջ՝ «Կենդանի հայեցողությունից դեպի աբստրակտ մտածողություն և նրանից՝ դեպի պրակտիկան—ահա՛ ճշմարտության իմացման, օբյեկտիվ ռեալության իմացման դիալեկտիկական ուղին»[2]։

Պրակտիկայի չափանիշը, նշում է Լենինը, ոչ միայն ապացուցում է մեր գիտելիքների օբյեկտիվ ճշմարտությունը՝ համապատասխանությունը օբյեկտիվ աշխարհին, այլև թույլ է տալիս վերհանել օբյեկտիվ ճշմարտության մեջ բացարձակության ու հարաբերականության դիալեկտիկան և ապահովում է մատերիալիստական ու դիալեկտիկական մտածելակերպը։ Ահա թե ինչպես. պրակտիկայի չափանիշը «այնքան «անորոշ» է, որ թույլ չի տալիս մարդկային գիտելիքներին դառնալ «բացարձակ»» (այսինքն՝ ցույց տալով հարաբերականության մոմենտը, զերծ է պահում մետաֆիզիկայից), «և միևնույն ժամանակ այնքան որոշ է, որ անխնա պայքար է մղում իդեալիզմի և ագնոստիցիզմի բոլոր տարատեսակությունների դեմ» (քանի որ ապացուցում է մեր գիտելիքների օբյեկտիվ ճշմարտությունը և նրանց ոչ միայն հարաբերականությամբ, այլև բացարձակությամբ օժտված լինելը)[3]։

---

[1] Վ. Ի. Լենին. *Փիլիսոփայական տետրեր*, էջ 174։

[2] Նույն տեղում, էջ 146—147։

[3] Տե՛ս Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 14, էջ 180։

Պրակտիկան իմացության տեսության հիմքում դնելը ամենևին էլ չի նշանակում նեղ-պրակտիցիզմի տեսակետի քարոզում, ինչպես այդ պնդում են մարքս-լենինյան փիլիսոփայության խեղաթյուրողները[1]։ Ընդհակառակը, պրակտիկայի շնորհիվ ամենից անհերքելի ապացույցը բերելով հօգուտ այն բանի, որ մտածողությունը կարող է տալ և տալիս է օբյեկտիվ ճշմարտությունը, մարքսիզմ-լենինիզմը դրանով իսկ ըստ արժանվույն բարձր գնահատեց մտածողության դերը իմացության պրոցեսում, ցույց տվեց մարդկային մտքի ամենակարողությունը և անսահմանափակ հնարավորությունները իրականության իմացման գործում։ Ավելին, Լենինը մի նոր էջ բացեց մարդկային մտածողության ուսումնասիրության գործում։ «Մտածողության ձևերի, տրամաբանական կատեգորիաների հետազոտությունը,— գրել է Էնգելսը,— շատ շնորհակալ ու անհրաժեշտ խնդիր է, և այդ խնդրի սիստեմատիկ լուծմանը Արիստոտելից հետո ձեռնամուխ եղավ միայն Հեգելը»[2]։ Նոր հիմքի վրա, գիտական, դիալեկտիկա-մատերիալիստական աշխարհայացքի սկզբունքներով զինված, Լենինը ամրողջացրեց ու զարգացրեց մտածողության ձևերի ու տրամաբանական կատեգորիաների մասին մարքսյան ուսմունքը։ Այդ ուսմունքը կառուցելիս Լենինը ելնում էր ամենից առաջ Մարքսի «Կապիտալից», որի մեջ «մի գիտության նկատմամբ կիրառված է մատերիալիզմի տրամաբանությունը, դիալեկտիկան և իմացության տեսությունը»։

Լենինյան շատ աշխատություններում, հատկապես Հեգելի «Տրամաբանության գիտության» և «Փիլիսոփայության պատմության վերարերյալ դասախոսությունների» կոնսպեկտներում, «Դիալեկտիկայի հարցի շուրջը» ֆրագմենտում, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքում, «Դարձյալ արհմիությունների մասին...» հոդվածում տրված են մտածողության ձևերի և կատեգորիաների նոր ըմբռնումները, մատերիալիզմի դիալեկտիկական տրամաբանության հիմունքները, այն սկզբունքները, որոնցից պետք է ելնի դիալեկտիկական մատերիալիզմի տրամաբանությունն ու իմացաբանությունը իր հետագա զարգացման ընթացքում։

Այս ասպարեզում Լենինի մեծագույն ծառայություններից մեկը տրամաբանության, դիալեկտիկայի և իմացաբանության համընկնելու վերաբերյալ ուսմունքի զարգացումն է մատերիալիզմի հիմքի վրա։

Մտածողության ձևերն ու օրենքները, տրամաբանության կատեգորիաները, ասում է Լենինը, ծագել ու կազմավորվել են իմացության զարգացման պատմական պրոցեսի ընթացքում և իրականանում են իմացական յուրաքանչյուր ակտի մեջ։ Ուրեմն դրանք արտաքին ձևեր չեն՝ պարտադրված մարդու իմացությանը, այլ՝ բովանդակալից ձևեր, որոնք գոյություն ունենալ չեն կարող իրենց բովանդակությունից դուրս և անկախ։ Իսկ այդ բովանդակությունը՝ մտածողության օբյեկտիվ բովանդակությունը իրական աշխարհն է իր զարգացման ու փոփոխման մեջ։ Թե՛ պատմականորեն, թե՛ իմացական յուրա-

[1] Օրինակ, ժամանակակից բուրժուական փիլիսոփայության կարկառուն դեմքերից մեկը՝ Ներտրան Ռասելը իր «Մարդկային իմացությունը, նրա ոլորտն ու սահմանները» գրքում այդ հիմքի վրա ճգնում է մարքսիզմ-լենինիզմը ներկայացնել որպես պրակտիցիզմի փիլիսոփայություն, դրանով իսկ ցուցադրելով, որ չի հասկացել ամենաոլիսավորը մարքսյան փիլիսոփայական մատերիալիզմի մեջ՝ դիալեկտիկայի ուսմունքը, և մասնավորապես դիալեկտիկական մատերիալիզմի իմացաբանության տեսությունը։

[2] Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Հայպետհրատ, 1950, էջ 268։

բանչյուր ակտի մեջ մտածողության ձևերը հանդես են գալիս իմացության շարժմանն ու զարգացմանը համապատասխանող որոշ փոխադարձ կապակցությամբ ու հաջորդականությամբ։ Այդ փոխադարձ կապակցության հատկանշական գիծն այն է, որ մտածողության պարզ ձևերից բխում ու ծավալվում են բարդ և բովանդակությամբ ավելի հարուստ ձևերը՝ պարզ ձևերին ներհատուկ հակասական կողմերի (առանձինի և ընդհանուրի, պատահականի և անհրաժեշտի, երևութականի և էականի) ծավալման ու զարգացման միջոցով։

Մտածողության այս դիալեկտիկան ինքն այլ բան չէ, քան վերացական-տեսական արտահայտությունը իրականության դիալեկտիկական զարգացման։ Որպես ապացույց Լենինը վկայակոչում է Մարքսի «Կապիտալը», որի մեջ վերացական-տրամաբանական վերլուծությունը բացահայտում է ժամանակակից հասարակության բոլոր հակասությունների սաղմերը պարզագույն երևույթների մեջ, դրանց հետագա զարգացումն ու ծավալումը։ Բնագիտության պատմությունը ևս «մեզ ցույց է տալիս... օբյեկտիվ բնությունն իր այդ նույն հատկություններով, առանձինի վերածումն ընդհանուրի, պատահականի վերածումն անհրաժեշտի, հակադրությունների անցումները, փոխարկումները, փոխադարձ կապը»[1]։ Այս մտքերի ամփոփումը Լենինը տալիս է հետևյալ եզրակի ձևակերպումով՝ «Միասնականի երկատումը և նրա հակասական մասերի իմացումը դիալեկտիկայի էությունն է»։

Տրամաբանությունն ըմբռնելով որպես աշխարհի իմացության պատմության հանրագումարը, Լենինը ընդգծում էր, որ այդ իսկ պատճառով տրամաբանական կատեգորիաները, մտածողության ձևերը պետք է ուսումնասիրել ոչ թե իմացության պրոցեսից դուրս, անշարժ վիճակում, այլ այդ պրոցեսի մեջ, այդ պրոցեսի ընթացքում, երբ իրականանում են այդ կատեգորիաները, մտածողության այդ ձևերը։ Այս իմաստով դիալեկտիկական մատերիալիզմի տրամաբանությունը և իմացաբանությունը պետք է իրենցից ներկայացնեն բնագիտության պատմության, տեխնիկայի պատմության և փիլիսոփայության պատմության կվինտէսենցիան։

Այդպիսով նա պահանջում էր, որ կյանքը ներխուժի իմացաբանության նույնիսկ վերացական խնդիրների մեջ։ Դրանում էր նա տեսնում նրա լուծումների ճշտության և հետագա զարգացման գրավականը, այն բանի գրավականը, որ իմացաբանությունը կկարողանա կատարել գիտությունների իսկ իմաստի ճշմարիտ թարգմանը լինելու իր խնդիրը։

ЛЕНИНСКИЙ ЭТАП В РАЗВИТИИ МАРКСИСТСКОЙ ТЕОРИИ ПОЗНАНИЯ

Г. А. ГЕВОРКЯН

(Резюме)

Ленинский этап в развитии марксистской гносеологии связан с теми эпохальными изменениями, которые произошли в жизни общества и в научной картине мира. Отличительной чертой данного периода развития фило-

[1] Վ. Ի. Լենին, *Փիլիսոփայական տետրեր*, էջ 329։

софии было перенесение центра борьбы материализма и идеализма в область гносеологии, обусловленное как характером философских проблем, решения которых настоятельно требовало естествознание, так и социально-классовыми причинами. При этом знаменательно, что в этот период идеализм и агностицизм выступали с позиций антидиалектики — метафизики, в то время как интересы дальнейшего продвижения науки требовали отстаивания материалистических ее основ через диалектический подход к действительности и к ее познанию.

Ленин блестяще доказал, что новейшие достижения естествознания служат прекрасным подтверждением диалектического материализма и, что очень важно, не опровергают материализм вообще, а показывают лишь ограниченность старого, метафизического материализма. В то же время те же достижения опровергают всякий идеализм. Ленин поднял диалектический материализм на новую, высшую ступень. В частности, в области гносеологии он обогатил марксизм глубокой разработкой вопросов о диалектике объективной, абсолютной и относительной истины, о конкретности истины, об истине как процессе, развил дальше положения марксизма о практике как основе познания и критерии истины. Неоценимый вклад внесен Лениным в разработку диалектической логики, в решение задачи по разработке форм мышления, категорий логики,— той благородной и необходимой задачи, «за разрешение которой после Аристотеля взялся только Гегель» (Энгельс).

Теоретико-познавательные принципы, развитые Лениным, служат дальнейшему прогрессу сегодняшней науки, являются разящим оружием в борьбе с современным идеализмом и агностицизмом.